ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-10/2-11 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 18 **-ը մարտի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ն**՝ ի դեմս ընկերության տնօրեն **Հ. Հարությունյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **27.12.2019թ.** կնքված № **ԳՀԱՊՁԲ-20-10/2-11** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***4,131,280 (չորս միլիոն հարյուր երեսունմեկ հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն,*** որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, ***բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:***

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Բուռնազյան 57
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011024537	Հ/Հ 1660004598740100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00473169
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/2-11 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Հ/Մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Մատակարարումը՝ 2020թ	
						2-րդ եռամսյակ	3-րդեռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.09.2020թ.
22.	Գրատախտակներ	հատ	20	18,600	372,000	10	10
29.	Լամպ՝ ինքնալիցքավորվող	հատ	316	4,480	1,415,680	158	158
46.	Չիրկիզվող պահարաններ(պահարան չիրկիզվող)	հատ	20	92,400	1,848,000	10	10
79.	Օդափոխիչներ	հատ	50	9,912	495,600	25	25
Ընդամենը					**4,131,280**		

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/2-11 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գին /ՀՀ դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝								
				Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.20թ.
22.	Գրատախտակներ	39292110/503	372,000	186,000	186,000	186,000	372,000	372,000	372,000	372,000	372,000	372,000
29.	Լամպ՝ ինքնալիցքավորվող	31521190/503	1,415,680	707,840	707,840	707,840	1,415,680	1,415,680	1,415,680	1,415,680	1,415,680	1,415,680
46.	Չիրկիզվող պահարաններ (պահարան չիրկիզվող)	44421300/511	1,848,000	924,000	924,000	924,000	1,848,000	1,848,000	1,848,000	1,848,000	1,848,000	1,848,000
79.	Օդափոխիչներ	39714100/501	495,600	247,800	247,800	247,800	495,600	495,600	495,600	495,600	495,600	495,600
Ընդամենը			**4,131,280**	**2,065,640**	**2,065,640**	**2,065,640**	**4,131,280**	**4,131,280**	**4,131,280**	**4,131,280**	**4,131,280**	**4,131,280**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ՕԲՈՐՈՆ ՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ
տնօրեն

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ